ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Ն. ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7-Ն

27 հունվարի 2021թ.

«Ն. ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ » ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2021թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու «Ն. Գետաշեն համայնքի ոռոգման առուների կառուցման» տնտեսական զարգացման ծրագիրը:

2. Սուբվենցիայի ստացման համար գործող կարգող կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել«Ն. Գետաշեն համայնքի ոռոգման առուների կառուցման» տնտեսական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:

3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2021թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ 2021թ հունվարի 27-ից :

Կողմ - 6 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ավագանու անդամներ

Ն. Ստեփանյան

Ս. Ահարոնյան

Ս. Գորանցյան

Վ. Կիրակոսյան

Խ. Փինաչյան

Գ. Գևորգյան

Համայնքի ղեկավար Կ. Գևորգյան